

ՆԵՐՈՂԳԵԿԱՆ ՅՆՑՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԵՍԻԼԱՅԻՆ ՊՈՒԶԻԱ: ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՅԻ «ՄԱՎԱՆ ՏԵՍԻԼ»-ՆԵՐԸ

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արցախի պետական համալսարան
Կրթության ազգային ինստիտուտ
Ստեփանակերտ

Ժամանակի չափումների մեջ Ե. Չարենցի հոգևոր կենսապատումը տեսլա-
նուն է և՛ որպես անեկորոգ գեղարվեստ, և՛ իր օրերի պատմությունը խորհրդանշող
երևույթ: Դեմ հանդիման են հոգևոր պատմության սկիզբն ու վերջը՝ շաղկապված
դժվարուղի մաքառումներով, գաղափարագեղագիտական վերաճշտումներով:
Գրական խորհրդապաշտական մուտքը, որ ակունքում ուներ Տերյան, նաև հայրե-
նական ապրումների ու մտածությունների ոգեղեն սկիզբն էր: Հայրենիքի որոնու-
մի անորոշ ճանապարհին «կապուտաչյա սիրուհու» տեսիլքն է, նույն «ցնորք
Նաիրին»՝ երազային, մշուշային հայրենիքը: «Կապուտաչյա սիրուհու» գաղափա-
րը հարակա է, հարահոս, որ ավելի ուշ կերպավորվելու է որպես «Հայաստան-
յար»: Պոեմում ոգեղեն ապրումի պահը թեև բեկվում է նաև տխուր մտածություն-
ներով՝ «երկիր իմ որբ, արնաքամ ու ավերակ», սակայն խանդավառ սպասումի
ենթագիտակցական մղումն այնքան ուժգին է, որ վերաճում է գաղափարական
ներքին հավատամքի. «Կապուտաչյա սիրուհիս, ամուսնամանք պիտի մենք//
Արևի տակ հայրենի հովիտներում կանաչուն// Ու հնամյա աշխարհում մենք բախ-
տավոր կլինենք...»:

Այդ ամուսնությունը, այսինքն՝ երկատված հայրենիքի վերամիավորումը,
կորսված հայրենիքի ու սեփական հոգեկերտվածքի վերագտնումը, ոգեղեն բերկ-
րանքից առարկայանալով, պոեմի վերջում փոխակերպվում է տոնահանդեսի կոն-
կրետ պատկերի. «Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազան// Կլինի մի հար-
սանիք՝ հազարնվազ ու խնդուն»: Հայրենիքի գալիքի հոգևոր սպասումի այսպիսի
տրամադրություններով կամավորական ջրկատների շարքում Չարենցը մտավ
Արևմտահայաստան. «Կանչում էր, կանչում ճամփան անմեկին// Մեր հոգին ուներ
թռիչքներ ու թև»: Սա «Դանթեական առասպել»-ի՝ որոնումի հոգևոր ուղիներին հա-
ջորդած հողեղեն, իրական ճանապարհի սկիզբն է, որ աստիճանաբար ծանրանա-
լու է չարչարանքի համատարած պատկերներով: «Կապուտաչյա սիրուհու» երա-
զանքի և իրականության ողբերգական բախման հոգեվիճակի բանաստեղծական
վերհուշն ընդհանրության մեջ առկա է «Հարդագողի ճամփորդները» բալլադում.

Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն

Կապուտաչյա երջանկության առասպել,

Մի երկնային առնչության պատմություն,
Ու կարծրացավ սիրտս անլույս ու անբեր...

Ցեղասպանության՝ մի ամբողջ սերունդի հոգեզգացողությունը ցնցած հոգե-
հարվածը որքան էլ արտամղվելու ներքին ընթացք ունենար, Չարենցի մեջ մնա-
լու էր որպես մշտառկա զգացողություն՝ տարիների հետ վերափոխվելով «ուղե-
ղային մորմոքի», ուղեղային մորմոքն էլ՝ շարունակական մահվան տեսիլների:
«Դանթեական առասպել» պոեմը բանաստեղծի եղեռնված հոգեզգացողության
գեղարվեստական ինքնարտահայտման սկիզբն է, արևելահայ գրական կյանքում
եղեռնի պոեզիայի հիմնաքարը: Պոեմի ներքին տրամաբանությունը իր քնարա-
կան հերոսին հասցնում է կյանքի անիմաստության, տիեզերական զառանցանքի
պատկեր-ապրումին:

Քայլել անիմաստ մի կյանքի համար,
Մարել - ու վառել աստղերը մարած,
Որ տիեզերքի զառանցանքը մառ
Չցնդի երբեք ու մնա երազ...

Չառանցանքի կենսազգացողության խոհն առկա է նաև նույն շրջանում
գրված «Հարդագողի ճամփորդները» բանաստեղծության եզրափակիչ տողերում:
«Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես, // Կյանքը դարձավ անմխիթար զառան-
ցանք...»: Բանաստեղծի հոգեգիտակցականը բեկած ցեղասպանության պատկեր-
ներն աստիճանաբար վերածվում են հիվանդագին մտապատկերների: Մահվան
տեսիլի հոգեբանական պատկերն ակնհայտ է: Ահա չարչարանքի տեսիլի հայտ-
նությունը «Դանթեական առասպել» պոեմում:

Ամբոխվել էին տեսիլներն ահեղ,
Խեղդերի նման ցատկում ու պարում
Եվ դառնում էին մեռելներ մի տեղ
Սատանայական տենդոտ շուրջապարում...

Հոգեբանական այս պահը դառնում է հոգեվիճակի պատմություն: Չարչա-
րանքի տեսիլները վերակրկնվում են կյանքի ճանապարհին՝ ծայրահեղ բևեռաց-
ման հասնելով 1930-ական թթ. պայմաններում: Զգայության ու մտասևեռումի ար-
տակարգ շիկացումն զգալի է նույնիսկ վերջին շրջանի սիրո և սեռի բանաստեղ-
ծական արվեստում: Դանթեական իմաստաբանական-պատկերային առնչություն-
ներով ազգային ողբերգությունը հիշողության մտասևեռումներով ու զուգորդու-
թյուններով զառանցանքի գեղարվեստահոգեբանական համապատկերի է հաս-
նում «Մահվան տեսիլ» պոեմում: Սիամանթոյի «Մահվան տեսիլք»-ի գրապատ-
մական ներքին առնչություններով Չարենցը գրում է իր ժամանակի և հոգու
«Մահվան տեսիլ» -ները: Ահա մի հատված, ուր «Դանթեական առասպել» պոեմի

ծանոթ տեսիլի վերահայտնությունն է.

Եվ շուրջը նրա խարույկի, բոլորած մի պար խելահեղ,
Ցատկոտում էին ու պարում ամբոխները այն դիվահար...

Մահվան մտապատկերների մեջ, որպես հոգեցնցումի հետևանքային զգայության մի պատմության՝ հավատակորուստի և ընդվզումի գեղարվեստական ուժեղ արձագանք, կարևորում է «Վահագն» պոեմը: Պոեմը և՛ տազնապ է, և՛ ջղածգուն, և՛ ազգային գոյի կործանված հիմքերի ողբերգական վերապրում: Մահվան տեսիլի բովանդակության մեջ, որպես հոգեբանական տարր, խուժում է նաև ծաղրի ու անարգանքի մտասևեռումը. «Տեսնում եմ ահա, // Որ ծիծաղում ու քրքջում են նրանք // Արնաքամ ընկած դիակիդ վրա...»: Զրդեհի աստծու ոգեկոչման, հրդեհ-կրակի հոգևոր տրամադրության շարունակությունն է նույն օրերին գրված «Աթիլա» պոեմը՝ աշխարհակործան սպառնալիքի խորհրդանիշ պատմական հերոսի՝ Աթիլայի նոր կերպավորումով ու ոգեկոչումով.

Յե՛յ, արևնուտքից մինչև արևելք
Պիտի հրդեհեն ու քանդե՛մ հիմա՝
Ես- արքա՛, աստվա՛ծ, տե՛նդ, դժո՛խք ու մա՛հ,
Ես - ճշմարտության խարազանը մերկ...

Ազգային ողբերգության տառապագին վերապրման բացահայտում են «Հատված»-ի մեջբերվող տողերը ևս. «Մենք, լուռ, շվարե՛լ ենք...// Են ով պիտի տա -// Երկիր իմ, թռիչք ու թևեր...»: Բանաստեղծի անհատական հոգեբանության նկարագիրը հասնում է ազգային ու համամարդկային ընդհանրացման: Ցեղասպանության ականատեսի՝ ներհոգեկան ուժեղ ցնցումին հաջորդած հոգեբանական տևական մորմոքի ուղղակի վկայությունն են նաև «Չարենց-Նամե»-ի ներքոբերյալ տողերը, ուր պատումի հանգիստ եղանակը պայմանավորված է տառապանքի ճանապարհին իմաստանացած ոգու ինքնահաղթահարման ուժեղ զգացողությամբ.

Ես կարծում էի- այնտեղ,
Ռունբերի ահեղ որոտում
Կգտնեմ քո դեմքը լուսե:
Բայց գտա... դիակներ փայտե
Ու տեսա մի երկիր, որը դու
Լքեցիր խուժումից մեր սև,
Ու իջավ թախծո՛ն հնամյա
Ու հոգիս ճնշեց, ճնշեց...

«Չարենց-Նամե»-ի վերոնշյալ տողերը հեղափոխական օրերի խանդավառությունը բեկող հիշողությունների պատկերն են նաև: Նախահեղափոխական շրջանում գրված Չարենցի «Աթիլայի» և հեղափոխությանը նվիրված «Սոմայի»

ու «Ամբոխները խելագարված»-ի հոգեբանական առնչությունն ակնհայտ է: Ազգային գոյության անորոշության մեջ, որպես իր ժամանակի Նարեկացի, Չարենցը տառապագին աղոթք էր առաքում հեղափոխական հզոր տարերքին.

Վառի՛ր երկիրս քո դեն - մի կարմիր կանթեղ,
Նետի՛ր ժպիտդ վերջին իմ ավե՛ր երկրին,
Տուր վերքերին նրա մառ, վերքերին անդեղ,
Կարմիր ժպիտը քո սուրբ, քույր իմ, Սոմա՛, կի՛ն...

Բայց եթե Նարեկացու աղոթքի տարակույսի մեջ ցոլարծակում է հույսի լույսը, Չարենցի դեպքում անհուսության դատապարտված նույն ողբերգական մտատանջությունն է: Տերյանական վիատ տրամադրության նրբերանգներով 1919թ. գրում էր.

Կարմիր են գալիքի լույսերը ու մուգ են.-
Կարմիր են, կրակե,- բայց, ա՛խ, անամոք են:
Եվ ո՞վ կկանչի նրանց, որ կյանքում այս
Մենակ են, տխուր են, տխուր ու անօ՞գ են...
Նվում է սրտիս մեջ ծանոթ մի մորմոք հին.-
Լույսերը հեռու՛ են, անփու՛յթ են, անհո՞գ են...

Ներանձնականացված մորմոքը եղեռնի ազգային վշտին ծանրացած պատմական հայրենիքի կորուստի ցավն է, կարոտի կսկիծը: Ազգային հոգեբանության մեջ որպես ողբերգություն բեկված կորուսյալ հայրենիքի ճակատագրի հարցում հեղափոխության բերած տարակույսները ոգեկեղեքման նոր դուռ են բացում Չարենցի համար: Ստատանջության այս փուլին բնորոշ զգայությունը կեսգիշերային անքնությունն է, ուղեղը շաղափող հեղափոխական աղմկոտ տարերքի զգայությունը. «Պայտերը դոփում են քունքիս մեջ հիմա.- Անհա՛յտ է աշխարհը՝ անցնում է ու մահ...»:

«Բուլշևիզմը այն չէր իրողության մեջ, ինչ-որ պետք է ըլլար իդեական իր համոզումներուն ճամփով: Չարենց փշրվեցավ իր իսկ պատրանախաբության և զգացական խանդավառություններուն պատճառով», - [10,17] նկատում է չարենցագետը: Հայրենիքի ճակատագիրն անձնականացրած բանաստեղծի՝ հեղափոխության ճանապարհին ուղեկից տարակույսի դրաման հոգեբանական խտացման է հասնում «Ողջակիզվող կրակ» շարքի «Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտագուրկ...» սկզբնատողով բանաստեղծության մեջ.

Եվ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն-
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ախ, այս երգերը իմ կարմիր-
Իմ ավերակ, իմ ո՛րք երկրում...

Տարակույսի դրամատիկ պահը բանաստեղծության մեջ, որ Տերյանի «Սիրտ անխնդուն, իմ երկրի պես// Դու ավերված, դու տրորված անխնա» խոհ-ապրումի վերահայտնությունն է, ավարտվում է իրողության հայտնաբերման ողբերգական տրամադրությամբ.«Վերք է դառնում սրտիս խորքում օրերի փայլը այս հրակ,// Ա՛խ, սի՛րտ իմ՝ բո՛րբ ու անսփոփ,- երկի՛ր իմ՝ ո՛րբ ու անուրախ...»: Հոգևոր տրամադրությունը հասնում է մտածական լարման մի վերջնակետի, որից այն կողմ անկումի սարսափի հոգեվիճակն է: «Անկումների սարսափից» բանաստեղծությունը անկումին դեմ հանդիման կանգնած, նաիրյան խոց-խոհի, նաիրյան անդուռ կարոտի հոգեվիճակին դատապարտված բանաստեղծի ներքին մենախոսությունն է.

Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի.
 Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի:
 Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բուլոր
 Եվ իմ մորմոքը վառել թախծներով ահավոր....

Բանաստեղծի խոհահուզական ապրումներն ի վերջո գաղափարական ընդհանրացման են հասնում «Հայաստանին» տաղում: Ժողովրդի պատմական ճանապարհի քննությունը հանգեցնում է փորձությունների ու ողբերգությունների անընդմեջ հաղթահարման ազգային ճակատագրի խոհափիլիսոփայությանը՝ «Հազար ու մե վերք ես տեսել- էլի կտեսնես...// Աշնան քաղած արտի նման՝ հազա՛ր զոհերի// Չհավաքած բերք ես տեսել- էլի կտեսնես....», որից հետո գալիս է սիրո ու ցավի երկրի պաշտամունքի հոգեկան պահը, փառաբանության հոգևոր ծեսը, ինքնագոհաբերման աստիճանի ինքնանվիրումի խոստովանանքը.«Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...»:

Ամբողջ 1920-ական թթ. հայրենիքի կորուստի կասկածի խոհը շաղափում էր բանաստեղծի գիտակցությունը: Ազգային որոշակի քաղաքական ուղղվածության պատկանող իր հերոսների միջոցով Չարենցն անուղղակիորեն հայտարարում է ինքնությունը կեղեքող ներքին կասկածը.

Մտածում էր՝ «Բաղդադ են հասել
 Ձորքերը անսահման Ռուսի-
 էլ
 Սրանք
 Ինչո՞ւ են փախել
 Բիթլիսից, Բաղդադից, Մուշից...
 էլ
 Ինչո՞ւ
 Երգումն առավ
 Անհաղթ Անդրանիկ փաշեն»...

Դարերի մեջ որպես արյունոտ հարցանիշ մեխվա Նաիրիի կորուստի կասկածի խոհը խոշտանգող է Չարենցի այլ հերոսի՝ խմբապետ Շավարշի դեպքում...«Ոչխարների նման սարսափահար// Նրանք փախան ֆրոնտից, տվին երգրունը...// Չետո Կարսն, Ալեքսյուր... վա՛յ ձեզ, հայեր...»: Հայրենիքի պատմության մեջ հեղափոխության ողբերգական հետևանքների գիտակցումը տեղիք է տալիս մահվան տեսիլների վերակրկնության: Այդ տեսիլը Չարենցի խորհրդապաշտական գեղագիտական համակարգին բնորոշ տխրադալուկ աղջկա լուսե պատրանքը չէ կամ հոգու այլազոյությունը, մահը՝ «անզույն ու անբեր» կյանքին հակադրված «լուսավոր առասպելը» կամ «անրջալույս տրտմությունը»: Տեսիլն այս դեպքում ոգու բերկրանքի ակնթարթ չէ, այլ չարչարանքի մղձավանջ, մահը՝ ազգային գոյության վախճանի ողբերգություն: Դարձյալ տիրապետող է հոգեցնցումի զգայության՝ ինքնախոշտանգող մեղքի ներքին խոհն՝ ուղղված այս անգամ իր դեմ, որովհետև ինքն էլ հեղափոխությամբ խանդավառների շարքում էր: Հեղափոխության այգաբացի լուսավոր սպասումը բանաստեղծության մեջ փոխակերպվում է «անկրակ իրիկնաժամի» և հայրենիքի կախաղանի մռայլ պատկեր-ապրումի: Հայրենիքի ճակատագրի պատասխանատվության տառապագին խոհը՝ «Գուցե այդ ես եմ, որ սրտով իմ լուսնահար // Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի», դառնում է ինքնագոհաբերության վճիռ՝ հայրենիքի փրկության բարձրագույն կամքով: Բանաստեղծի անանձնական կամքը հնչում է հրաման-հրահանգի պես.

Թող ո՛չ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան...

Որպես ներհոգեկան հարվածի զգայության մի փուլ՝ Չարենցի պոեզիայում առանձնահատուկ է նաև ազգի պատմական անցյալի վերաքննությունը, ինչն այս դեպքում, բնականաբար, պետք է ընկալվեր որպես «անանցյալ անցյալ»: Անանցյալ անցյալի մտատանջությունն, որպես հոգեվիճակ, առկա է ոչ միայն «Պատմության քառուղիներով» պոեմում, այլև, որպես կեսգիշերային անքնություն, «Դեպի լյառը Մասիս», «Զրահապատ «Վարդան Զորավար» գործերում.: Գաղափարական-ներհոգեկան բեկումն առկա է նաև «Ես այն չեմ այլևս» բանաստեղծության մեջ. «Ես այն չեմ այլևս, այն չեմ, // Նաիրյան միամիտ այն պոետը...// Եվ դժվար է հավատալ այլևս, // Որ եթե բարձր կանչեմ՝ // Կցուլա ցանկալի այն արևը...»:

Ազգային ուղու ներքին քննահայացքի զգայական պահը կորուստի հոգեկան ուժեղ վերապրումի դրսևորում է: Կորուստի վերհուշը՝ թախծի ու կարոտի նրբերանգներով, «Nostalgia» բանաստեղծության մեջ դառնում է ներանձնական հոգեպատկերի բացահայտման միջոց: Հուշի մեջ ապրող հայրենի երկրի ոգեղեն-

իրական զգացողությունը, հուշի մեջ առկա տխրությունը կարոտացավի ազգային հոգեվիճակի իմաստաբանական խտությունն ունի:

Այն ափերում, ուր դու,- օ՛, տարիներ առաջ,-

Թափառելով՝ սիրո երգեր էիր գրում

Եվ գուրգուրում, իբրև սերունդների երագ,

Այն, որ թաղված մնաց քո գրքերում,-

Այն ափերում հիմա մի բարբարոս հովիվ...

Կորուսյալ ծննդավայրի կարոտացավը վերաճում է կարոտախտի, զառանցական տեսիլի՝ երևույթի բուն իմաստով, ինչի արգասիքն է «Երազների մասին» պոեմը՝ «Իմ կարոտանք անդեղ ու անփարատ»: Ազգային պատմության խոհաքննությունը բանաստեղծի մտասևեռումներում ուրվապատկերում է գալիք փորձանքներին դեմ հանդիման արնակող, ուժահատ գայլի խորհրդանիշ-տեսիլը: Հայրենիքի պատմության չարենցյան այս խորհրդանիշը հայրենիքի իրական վիճակի իմաստային կշիռն ունի: Չարենցը վերաքննում է պարտություններով ու կորուստներով բնորոշվող ժողովրդի պատմությունը, որով ձևավորվել է ազգային հոգեբանությունը՝ պարզելու Հայաստանի քաղաքական բախտի նախադրյալները: «Անանցյալ անցյալի» պատմափիլիսոփայությունն ինքնահաստատվում է պոեմի ամբողջ ընթացքում: Բանաստեղծն ու հայրենիքը՝ իրենց անցյալ ու ներկա օրով, իրարից անբաժան գոյություն են, նույն հոգեկերտվածքն ունեն:

Այսպես անցել ենք մենք անխոհ ու անզաղափար

Պատմության քառուղիներով, որպես միրած,-

Կտրել ենք երկար մի ճանապարհ,

Եվ ճանապարհը մեր այս

Ե՞րբ է արդյոք փայլատակել, օ՛, երբ,

Ե՞րբ է վառվել լույսով գալիքնափայլ...

Պատմության քառուղիներով անընդհատ խորացող ներքին հայացքը, ազգային ինքնաճանաչողության դառը խորհրդածությունները հանգում են «անխոհ ու անզաղափար» պատմական ճանապարհի վերջնակետին, ապագայի անհեռանկար դիմապատկերին.

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ

Ջարմանալի՛ թեթև, զարմանալի՛ անդեմ՝

Մերկության պես տկլոր ու անանցյալ...

Ժողովրդի պատմության խոհաքննությունը ժամանակի ազգային օրհասական համապատկերից ձեռք է բերում Հայաստանի ոգեղեն-իրական գոյակերպի քաղաքական կշիռ: Ռուսական կողմնորոշման չարենցյան ընկալումը ժամանակային կոնկրետ չափումով և անհատականացված դրամատիզմով առկա է ոչ միայն «Պատմության քառուղիներով», այլև «Դեպի լյառն Մասիս» պոեմում:

Աբովյանի կյանքի անդուռ տարիների խորախոց խոհը՝ «Եվ չի՞ եղել արդյոք իր ողջունած հեռունը// Մի թիարան վատթար», Չարենցին է նաև.

Օ՛, անպտուղ վաստակ ու տքնություն երկար,

Գոսն օրերում - ոգու հոգնություն եղկ,-

Անտեսնելի գալիք ու կապարե ներկա,

Անհորիզոն կյանքի կապարե երգ...

Մի՞թե սուտ է բոլորը և փորձանք...

Անցյալի կորուստների վրա կապարի պես ծանրացած ներկայի և անհորիզոն պագագայի ժամանակային այս խոհը, պատմականորեն ձևավորված հոգեբանության մեջ բևեռացված կասկածը ժամանակների ընդհանրացումով «Զրահապատ «Վարդան Զորավար» պոեմում միանշանակ տարածվում է ժողովրդի գոյաբանության ամբողջ ընթացքի վրա. «Օ՛, չի՞ եղել արդյոք մեր պատմությունն ամբողջ // Մի այսպիսի անգո Ավարայր...// Չի՞ եղել արդյոք բեմական/Նույն Ավարայրը խելճ...»):

Տարիների ստեղծագործական այս խոհերն ի վերջո ամբողջանում են «Մահվան տեսիլ» պոեմում՝ որպես զառանցանքի տեսիլային համապատկեր: Հիվանդագին չափերով սրված հոգեկան զգայությունները, ենթագիտակցության մեջ բեկված մտապատկերների գերսեղմվածությունն ոգու տեսադաշտ են բերում ազգային մտավոր հանճարի գալիք սպանողը: Կոտորածի նախազգացումն արտահայտող յարճանյանական բնաբանը՝ «Կոտորած, կոտորած, կոտորած», նախանշում է պոեմի ներքին տրամադրությունը: Տեսիլային պատումն ընթանում է բանաստեղծի հիշողության մեջ հառած նախկին մտապատկերների ու զուգորդությունների ներհայեցողական բազմատեսակ ձևերով ու զգայություններով: Ակնհայտ է «Դանթեական առասպել» և «Մահվան տեսիլ» պոեմների մղձավանջային հոգեճնշիչ պատկերների ներքին առնչությունը՝ առաջինը գրված ցեղասպանությունից անմիջապես հետո, երկրորդը՝ 1937-ից առաջ. «Եվ այն տեսիլը, որ տարիներից հառնած// Ծառացել է ահա իմ վարանոտ ու զարհուրյալ հայքների դեմ...// Այդ տեսիլը դժնի է ու ժանտաժանտ, անփայլ է ու գոսնական...»: Կոտորածի զգայությունների ու զուգորդությունների հոսքը գիտակցության մեջ ծայրաստիճան լարվածության է հասցնում տառապագին մտասևեռումը՝ առարկայացնելով ուղեղը հարվածող արյան կաթկոցի զգացողությունը. «Ցնծության ճիչեր խելագար, զառանցանք ու վիշտ խելահեղ// Ոսկորի ու մսի խրախճանք, երկաթի շքինդ ու շառաչ...»: Տառապում է հայ հանճարի միտքը. հոգեկան ցավը մի դեպքում՝ հայ երգի հանճարի կյանքում, հասնում է խելագարության, մի այլ դեպքում՝ հայ մտքի հանճարի կյանքում՝ շարունակական մահվան տեսիլների: Նաև Կոմիտասի ճակատագրի անձնական վերապրումից Չարենցի՝ ակնածանքի հասնող կոմիտա-

սասիրությունը. Կոմիտասը՝ որպես եղեռնի մեծ նահատակ, ազգային ցավից մթագնված հիշողություն, տարագիր ժողվրդի խորհրդանիշ, վերադարձի ոգի...

1930-ական թթ. ողբերգության տեսիլը հոգեբանական անցումներով և խորհրդածություններով դրամատիկ մենախոսության տարրեր է ձեռք բերում «Որպես գորշ, դեղին տերևներ...» պոեմում. «Եվ չունե՞ք անգամ փոս դուք հիմա՝// Եվ օտա՞ր եք հայրենի հանդում»: Հոգեկան ծայրաստիճան գրգռված կացությունն արտահայտվում էր ոչ միայն գեղարվեստում, այլև՝ կյանքում: Իր՝ Մարիանա Այվազյանի սպանության փորձի նախահոգեվիճակի առնչությամբ Չարենցը հիշում է. «Ես վախենում էի մենակ մնալ... Գիշերվա ընթացքում բնակարանում հնչող յուրաքանչյուր ձայն ինձ ասրսափի էր մատնում: Այս ամենին գումարեք և այն, որ եթե ինձ հաջողվում էր քնել՝ այդ քունը անմիջապես փոխվում էր զարհուրելի զառանցանքի... Я живу еще физически - но я уже труп. Я чувствую свое разложение. Я с ума схожу» («Ես դեռևս ապրում եմ ֆիզիկապես, բայց ես արդեն դիակ եմ: Ես զգում եմ իմ քայքայումը: Ես խելագարվում եմ») [9, 328-330]: Այս հոգեվիճակի բանաստեղծական պատկերն է 1935 թ. գրված «Ձառանցանք» բանաստեղծությունը:

Ատամնաթափ մի մարդ, գանգը մնան կապկի,

Նստել էր կոկորդիս և ինձ խեղդում էր...

Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին-

Եվ անունը նրա... «Քնքշություն» էր...

Ձառանցանքն այս դեպքում հոգեկան խաթարման երևույթ է, պատճառաբանված հոգեկան հետևանք: Հանճարեղության և խելագարության դրամատիկ ժամադրությունից չէր դա, այլ պատմական պահի ուժեղ վերապրումից: Եղեռնի մտասևեռումը Չարենցի մեջ ընդմիշտ մնաց որպես չհաղթահարված հոգեկան տազնապ: Կեսգիշերային տառապանքների բանաստեղծական ինքնարտահայտություններ են 1935-1937 թթ. գրված «Հերոսի հարսանիքը», «Հուսահատության ժամերին իմ սև», «Ելլեզհաստես» և ուրիշ գործեր:

Ես վախենում եմ, ինչպես Նեկրոման, կես-գիշերային ժամից,

Երբ ելնում է լուսինը դագաղից ու մեռնում է անգամ քամին....

1931թ. հոգեկան ջղազգրիռ վիճակում Չարենցն ինքնասպանության փորձ է արել նախ՝ ատրճանակով, ապա՝ զարկերակը կտրելով. «Չարենցն ասում էր, որ իր համար ծանր է ապրելը և ուզում է վերջ տալ կյանքին» [9, 530]: Չարենցագետ Դ. Գասպարյանը նկատում է. «Եվ հոգեկան վերելքների, և անկումների պահերը բևեռացված էին տառապագին սրվածության աստիճանի: Դրան նպաստում էին մի կողմից կնոջ՝ Արփենիկի կորուստին հաջորդող ողբագին ապրումները, որի հետ նա ոչ մի կերպ չէր հաշտվում, <...> մյուս կողմից՝ իր դեմ ուղղված միտումնավոր քննադատությունը: Այդ ամենը նրան երբեմն հասցնում էին հիվանդագին

ապրումների, որոնք ավելի էին խորանում՝ կապված մորֆինի պարբերական ներարկումների հետ: <... > Եւ լավ գիտեր, որ ինքնասպանության ճանապարհով իշխող վարչակարգից իրենց դժգոհությունն էին հայտնել իր ժամանակակից ռուս բանաստեղծները» [5, 3]:

Ողբերգության դատապարտված մարդու մենության հոգեվիճակը տեղիք է տալիս ներքին բախումների ու հակասական տրամադրությունների: 1935 թ. Չարենցը գրում էր. «Լեցուն է սիրտս լացով...// Ինձ խաբում, ինձ դավում են թերևս», մի օր հետո՝ «Պետությունն՝ ամբողջ իր ապարատով// Ելել է ահա... մի պոետի դեմ...// Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ// Ու չհիանամ ...»: Հեղափոխության «ըղձյալ այգաբացի» բանաստեղծական վառ պատկերը դառնում է «ցուրտ Հոկտեմբերի» անշող պատկեր: Տերյանի «Ցուրտ Հոկտեմբերն է ծեծում իմ դուռը» դրամատիկ խոհ-ապրումը, հեղափոխության ներքին իսկության ընկալումն ու վերապրումը Չարենցի մոտ դառնում է «Ցուրտ Հոկտեմբերն է գալիս...»: 1936 թ. գրված այս ռուբայինը մտավոր հալածանքի ու խեղված կյանքի զգայապատկերն է.

Ցուրտ Հոկտեմբերն է գալիս, ցուրտ Հոկտեմբերն է գալիս,-

Ե՛լ, բանաստեղծ, հավաքի՛ր գիրք, և՛ հուշեր, և՛ խոհեր...

Ո՛չ բարեկամ կա կյանքում, ո՛չ թշնամի անձկալի...

Ցուրտ Հոկտեմբերն է գալիս...

Ժամանակի ընկալման կերպը մռայլագին երանգներով սրվում է հաջորդ ռուբայինում. «Այսքան դաժան, զարհուրելի և այսքան մութն ու անդուռ// Դեռ չի տեսել իր ապագան հանճարի լույսը մարդու// Մեր նոր լույսով, ո՛չ մի հույսով, ո՛չ մի շքեղ երագով, Չի վառվում այն, ինչ պիտի գար երգ ու տաղով զվարթուն...»:

Մահվան արշավանքի շարժապարկերի տիրույթը ծավալվում և ահեղանում է Չարենցի 1935-1937 թթ. պոեզիայում: Ժամանակի վայրագ ընթացքը հիշողության մեջ անդրադարձվում է այս կերպ. «Արշավում է և՛ քո, և՛ գալիքի վրա՝// Վարձկան ոհմակների գլուխն անցած,// Հագած զարմանալի զրահ՝ //Քո միջնադարյան անցյալը...»: Մահվան մղձավանջը՝ հարսանիքի, ցնծության ու ծիծաղի գառանցական աղմուկ- տեսիլներով, համատարած է Չարենցի այդ շրջանի գործերում. « Թմբուկ են խփում, հարսանի՛ք է, // Հարսանիք է երկրում աշնանային-// Արշավում է անողոք գալիքը // Ջգեցած զգեստներ մահի...»: Հաջորդ բանաստեղծության մեջ տեսիլը սաստկանում է ուղեղի մեջ պարս բռնած զգայական զարհուրելի պատկերի: Ստրկացված ամբողջ երկրի և բռնակալի պաշտանմունքի ծես-առերեսման պատկերն է դա . «Ցնծություն է, ծիծաղ// Եվ <...> հարյուր հիսուն միլիոն մարդ// Կարուսել են նստել<...>» Եվ վերևում ժպտացող մի իդիոտ...// Բարձրանում է փողի, որկորի, քթի հոտ...»: 1935-1937 թթ. Չարենցի մտապատկերներում արյան խորհրդանիշն այնքան տիրապետող է

դառնում, որ կարմիրը խուժում է անգամ մարմնի և կրքի զգայությունների աշխարհ: «Կեսօր» բանաստեղծության մեջ «կ»-երի բաղաձայնությը, «կարմիր», «կրկես», «կաթսա» եզրույթներն ակնարկում են կացինն ու դրա հետ կապված զգայապատկերները.

Կարմիր կեսօր է կրկեսում կիս <քայք>

Կաս կաթսաներ են կարծես կոր <քայք>

Կոնքեր կարմրաթեք <քայք> կիզում...

«Կարմիր»-ի ներքին տարածությունը համալրվում է բովանդակային նոր շերտերով: Արյան գույնին ավելանում է արյան հոտը. «Ղոտ է գալիս կրկին արյան// Այս վարպետի եփած ճաշից»: Արյան զգացողությունը աստիճանաբար խտանում, մարմնավորվում է կոնկրետ պատկերի մեջ, դառնում գործողություն – պատկեր.

Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի/

Մայրամուտի փոխվեց արյունալիճ,-

Ուր մեր Արևն է նոր սուզվում արյունալի,

Որպես կարմիր գլուխ գլխատվածի...

Գլխատվելու ուղեկից հոգեվիճակը ջղաձիգ խոհերի և երևույթի տեսիլի ներքին որոշակիություն ունի: «Օ՛, մանկիկներ մեր լույս...» սկզբնատողով բանաստեղծության մեջ ողբերգական երևույթը տարածվում է մի ամբողջ սերունդի կյանքի վրա. «Իսկ ձեզ համար նոքա արդեն սրում են սուր, // Որ մի գիշեր անլույս ձեզ գլխատեն»: «Կարմիրի», «կացնի», «գլխատումի» պատկերների տիրույթն ի վերջո ամբողջանում է կյանքի լույսը գլխատող «դահիճի» կերպարով: «Միջնադարյան կացին» բանաստեղծության մեջ՝ գրված 1937-ին բանտում, վեր է հառնում կառավարող գահին տիրող և միջնադարյան սրած կացնով դահիճի զարհուրելի կերպարը: Պատկերը մանրամասնվում է ահասարսուռ չափերով. «Նա մորթոված գլուխների// Ուղեղներն է միայն ծամում»: Այդ դահիճը մեկ «Շահ Աբասի շառավիղ» է, մեկ՝ «թիֆլիսցի կինտո», մեկ՝ «զարհուրելի երևույթ» չեղյալ աշխարհում», մեկ՝ «իբրև մի կես» քաղցած, աններ- ձեռքին կարմիր մի կացին»: Այս անեցի մեջ, այնուհանդերձ, իր արմատի ու բունի աներկբա ու սթափ գիտակցությամբ, առկա է նաև խորհրդածությունն իր և իրենով ընդհանրացվող ազգի գոյության և ոգու առեղծվածի շուրջ.

Ախ, քանի՛ անգամ բարձրացած

Սև կացինը, որ ինձ զգետնե,

Եվ որքան ձգտեցին գտնել

Իմ երգի արմատները կարծր,-

Դիմացած քանի՛ հարվածի,

Եվ կրծքից, և՛ բնից խոցված-

Չայրենի ավյունով լցված-

Չըկտրեց և՛ ոչ մի կացին...

Տեսիլների շարքի տրամաբանական վերջին հայտնությունը «Անվերնագիր» բանաստեղծությունն է՝ գրված դեռևս 1936 թ.: Մահվան դեմ հանդիման կանգնած, մահվան տեսիլներով շարունակաբար կեղեքված բանաստեղծը, հպարտ և անպարտ ինքնությամբ, պարզ տեսնում է իր մահվան օրվա զգայապատկերն ու բանաստեղծի և մարդու իր առասպելը.

Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսած՝
Չարմացած կզգան ինձ այնքա՛ն մոտիկ
Եվ հանկարծ այնքա՛ն թանկ ու հարազատ...
Այն, որ ես էի, որ ի՛մն էր առաջ,
Ել չի հառնելու և ո՛չ մի գրքում,
Եվ ո՛չ մի գրքում աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, և ո՛չ մի գրքում...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղբալեան Ն., Ամբողջական երկեր, հհ. 1-2, Բեյրութ, 1959, 1966:
2. Բախչինյան Յ., Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի, Ե., 1997:
3. Գասպարյան Դ., Ողբերգական Չարենցը, Ե., 1990:
4. Գասպարյան Դ., Փակ դռների գաղտնիքը: Չարենցը, Բակունցը և մյուսները, Ե., 1994:
5. Գասպարյան Դ., Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996:
6. Գասպարյան Դ., Չարենցի հետ, Հուշեր, Ե., մաս 1-ին, մաս 2-րդ, 1997, 2008:
7. Գասպարյան Դ., Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը, Ե., 2003:
8. Եղիշե Չարենց, երկերի ժողովածու, հհ. 1-4, Ե., 1962-1968:
9. Եղիշե Չարենց: Նորահայտ էջեր, Ե., 1996:
10. Նավասարդյան Վ., Չարենց: Հուշեր և խորհրդածություններ, Ե., 2007:
11. Չարենց Արփ., Եղիշե Չարենցի աղոթքները, Ե., 1999:
12. Չարենց Արփ., Չարենցի հետ, Ե., 2009:

**ОТ ВНУТРЕННЕГО ДУШЕВНОГО ПОТРЯСЕНИЯ ДО ПРИЗРАЧНОЙ ПОЭЗИИ.
ПРИЗРАКИ СМЕРТИ Е. ЧАРЕНЦА**

ОГАННИСЯН Н.

РЕЗЮМЕ

Психологическое чувство целого поколения, потрясенного стрессом геноцида, сколько бы не имел внутренний процесс вытеснения, в Чаренце оставалось бы как постоянное чувство, превращаясь с годами в “ мозговую боль” , а мозговая боль – в продолжительные призраки смерти. Психологический момент становится историей душевного состояния . Призраки мучения повторяются на дороге жизни, доходя до крайней поляризации в поэзии 1930 - х годов. Черезмерное напряжение чувств и концентраций ощутимо даже в последнем периоде поэтического искусства любви и страсти.

**FROM INNER SPIRITURAL CONCUSSION TO VISIONARY POETRY:
E. CHARENTS' “VISIONS OF DEATH”**

N. HOVHANNISYAN

SUMMARY

Tough strong was the attempt to force out the shock of genocide that had shattered a whole generation, it was still staying in Charents as a constant feeling turning into “brain grief” with years which in its turn was being transformed into continuous death visions. The psychological point becomes a history of emotional state. The torment visions re-repeat through his lifetime reaching to their extreme culmination in the poetry of 1930s. The exceptional incandescence of sense and anxiety is tangible even in the stage of his poetry of love and passion.